ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ համայնք, ՀՀ Կոտայքի մարզ, գ. Սոլակ 4 թղմ. 1, Հեռ. 098171186 , solak.kotayk@mta.gov.am

N 99
26 ապրիլ 2017թ.

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԱՊԵՏ ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գուլոյան

Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ է ուղարկվում Կոտայքի մարզի Սոլակ համայնքի ավագանու 2017 թվականի ապրիլի 25-ի թիվ 7 նիստի որոշումները:

Առդիր 8 թերթ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բաղալ Սարգսյան

Կատ. Սոլակի համայնքապետարանի

աշխատակազմի քարտուղար՝ Ք. Սուքիասյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Սոլակ, 098171186, solak.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 23

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի պահանջով

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել համայնքի ավագանու 2017թ ապրիլի 25-ի թիվ 7 արտահերթ նիստի օրակարգը

1. Կոտայքի մարզի Սոլակ համայնքի ավագանու 2016թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 52-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

2. Կոտայքի մարզի Սոլակ համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 55-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՐՍԵՂՅԱՆ ՖԻՐԴՈՒՍ
2. ԴԱՆԻԵԼՅԱՆ ՌՈՄԱՆ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ
4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԵՐՈԲ
5. ՀՈՒՆԱՆՅԱՆ ՀԵՆՐԻԿ
6. ՀՈՒՆԱՆՅԱՆ ՀՈՎԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲԱԴԱԼ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Սոլակ, 098171186, solak.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 24-Ն

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԹԻՎ 52-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է՝

Կոտայքի մարզի Սոլակ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 9-ի «Կոտայքի մարզի Սոլակ համայնքի 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների միասնական դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 52-Ն որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ, համաձայն հավելվածի

Կողմ -5 Դեմ -1 Ձեռնպահ -0

1. ԲԱՐՍԵՂՅԱՆ ՖԻՐԴՈՒՍ
2. ԴԱՆԻԵԼՅԱՆ ՌՈՄԱՆ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԵՐՈԲ
4. ՀՈՒՆԱՆՅԱՆ ՀԵՆՐԻԿ
5. ՀՈՒՆԱՆՅԱՆ ՀՈՎԻԿ

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲԱՂԱԼ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
Կոտայքի մարզի Սոլակ համայնքի ավագանու 2016 թ
դեկտեմբերի 22-ի թիվ 52-Ն որոշման

Հավելված
Կոտայքի մարզի Սոլակ համայնքի ավագանու 2017 թ
ապրիլի 25-ի թիվ 24-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017Թ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծի համապատասխան նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլատվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական շենքերի և շինությունների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի , այդ թվում այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 5000 դրամ

2) սույն կետի «1»ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

ա. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 9 000 դրամ,

բ. 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15 000 դրամ,

գ. 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15 000 դրամ,

դ. 3000-ից ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30 000 դրամ,

ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

ե. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 900 դրամ,

զ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1500 դրամ,

2.Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների , վերնակառույցների , շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն ՝ 900 դրամ :

2) բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների , վերնակառույցների , շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն և բացի սույն կետի »1« ենթակետով սահմանված դրույքաչափից , կիրառվում է նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության ՝ փոփոխության մասով .

3) նախատեսվում է միայն կցակառույցների , վերնակառույցների , շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով , այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար 3000դրամ:

4. Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 11000 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 14000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 21000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 26000 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 50000 դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1500 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 11000 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 14000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 21000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45000 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 50000 դրամ:

5. Համայնքի վարչական տարածքում՝

1) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի «Առևտրի և ծառայությունների մասին » Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 350դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

2) հեղուկ վառելիքի , սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 200 000 դրամ:

3) խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 40 000 դրամ:

3.1) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5100 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 11000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 16000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 22000 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 50000 դրամ,

ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25000 դրամ:

6. Համայնքի վարչական տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին), խաղատներին ժամը՝ 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 30 000 դրամ

2) հանրային սննդի, զվարճանքի օբյեկտների համար՝ 100 000 դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 500 000 դրամ.

4)խաղատների համար՝ 1.000.000 դրամ

5)շահումով խաղերի համար՝ 500.000 դրամ

6) վիճակախաղերի համար ՝ 150.000 դրամ

7. Համայնքի վարչական տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոսը արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանքը գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 դրամ.

3) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ

4) այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ

5) դատարկ գովազդային վահանակների համար՝ 180 դրամ:

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 50 դրամ:

9. Համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 10 000 դրամ:

10.Համայնքի վարչական տարածքում քառաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 500 000 դրամ:

11. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու ու հաստատելու,

ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 5 000 դրամ:

12. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 1000 դրամ:

13. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցների վճար սահմանել 5000 դրամ:

14. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճար սահմանել ամսեկան մեկ շնչին 100 դրամ:

15. Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար սահմանել՝ 10 000 դրամ:

16. «Սոլակի մանկապարտեզ նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ հաճախող սաների վարձավճարը սահմանել օրը 200 ՀՀ դրամ:

17. «Պերճ Բաղալյանի անվան մշակույթի տուն» ՀՈԱԿ-ի խմբակներ հաճախող սաների վարձավճարը սահմանել ամսեկան 1000 ՀՀ դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Սոլակ, 098171186, solak.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 25-Ն

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԹԻՎ 55-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է՝

Կոտայքի մարզի Սոլակ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 9-ի «Կոտայքի մարզի Սոլակ համայնքի 2017 թվականի բյուջեի հաստատման մասին » թիվ 55-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները

1. Համայքն վարչական բյուջեի եկամուտների 1343 տողի 7421 հոդված «0 դրամ» թվերը փոխարինել «2 790 000 դրամ» թվերով

2. 09.01.01.51 ծրագրի Սոլակի մանկապարտեզի սուբսիդիա 4511 հոդվածի «10 365 000 դրամ» թվերը փոխարինել «13 065 000 դրամ» թվերով

3. 08.02.03.51 ծրագրի Սոլակի մշակույթի տուն սուբսիդիա 4511 հոդվածի «5 700 000 դրամ» թվերը փոխարինել «5 790 000 դրամ» թվերով

4. 11.01.02.51 ծրագրի Սոլակի պահուստային ֆոնդի 4891 հոդվածի «4 000 000 դրամ» թվերը փոխարինել «3 880 000 դրամ» թվերով

5. 03.02.01.51 ծրագրի Սոլակի փրկարար ծառայություն ծրագրի 4841 հոդվածի «0 դրամ» թվերը փոխարինել «1 200 000 դրամ» թվերով

Կողմ -5 Դեմ -1 Ձեռնպահ -0

1. ԲԱՐՍԵՂՅԱՆ ՖԻՐԴՈՒՍ
2. ԴԱՆԻԵԼՅԱՆ ՌՈՄԱՆ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԵՐՈԲ
4. ՀՈՒՆԱՆՅԱՆ ՀԵՆՐԻԿ
5. ՀՈՒՆԱՆՅԱՆ ՀՈՎԻԿ

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲԱԴԱԼ ՍԱՐԳՍՅԱՆ